Մահապատժի դեմ պայքարի եվրոպական և համաշխարհային օր, 10 հոկտեմբերի 2023 թ: Եվրոպական միության Գերագույն ներկայացուցչի և Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի համատեղ հայտարարություն

Մահապատժի դեմ պայքարի եվրոպական և համաշխարհային օրվա կապակցությամբ Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը վերահաստատում են մահապատժին իրենց անվերապահ դեմ լինելը, ներառյալ դրա վերականգնմանը, բոլոր դեպքերում և բոլոր հանգամանքներում:

Մահապատիժն անմարդկային և նվաստացուցիչ պատժամիջոց է, որը մարդու արժանապատվության բացարձակ ժխտումն է: Այն չի ծառայում որպես հանցագործության կանխարգելիչ միջոց և մահապատիժն արդարադատության սխալները դարձնում է անդառնալի:

Աշխարհը շարունակում է հրաժարվել մահապատժից. աշխարհի երկրների ավելի քան երկու երրորդը վերացրել է մահապատիժը օրենքով կամ գործնականում:

Մենք շնորհավորում ենք Զամբիային և Գանային մահապատիժը վերացնելու համաշխարհային շարժմանն անցյալ տարի միանալու համար: Մենք նաև ողջունում ենք ռեկորդային 125 ձայնը Գլխավոր ասամբլեայի բանաձևի օգտին, որը կոչ է անում գլոբալ մորատորիում սահմանել մահապատժի կիրառման նկատմամբ՝ դրա վերջնական վերացման նպատակով: Մենք կոչ ենք անում այն պետություններին, որտեղ դեռևս կիրառվում է մահապատիժ, մտցնել մորատորիում՝ որպես դրա վերացման առաջին քայլ:

Այս տարի լրանում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) թիվ 13 արձանագրության ուժի մեջ մտնելու 20-ամյակը, որը վերաբերում է մահապատժի վերացմանը բոլոր հանգամանքներում: Այս պահի դրությամբ այն վավերացվել է Եվրոպայի խորհրդի անդամ 44 պետության կողմից:

Մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում նրանց՝ այդ թվում ողջունելով Հայաստանի Ազգային ժողովի կողմից թիվ 13 Արձանագրության վավերացումը և Ադրբեջանի կողմից դրա ստորագրումը: Մենք խրախուսում ենք երկու անդամ պետությունը հնարավորինս արագ ավարտել վավերացման գործընթացը.

Բելառուսը միակ երկիրն է Եվրոպայում, որը դեռևս մահապատիժ է կիրառում: ԵՄ-ն և Եվրոպայի խորհուրդն իրենց մտահոգությունն են հայտնում այն կապակցությամբ, որ Բելառուսը մեկ տարուց քիչ ժամանակահատվածում երկրորդ անգամ երկարաձգել է մահապատիժը՝ այս անգամ պետական ծառայողների և զինվորականների նկատմամբ պետական դավաճանության համար:

Ըստ հաշվարկների՝ նախորդ տարի Չինաստանում մահապատժի մասին դատավճիռների և իրականացված մահապատիժների թիվը հասնում է հազարների, թեև այդ թվերը մնում են պետական գաղտնիք: Մնացած աշխարհի կտրվածքով իրականացված մահապատիժների թիվն աճել է այնպիսի երկրներում, ինչպիսիք են Իրանը և Սաուդյան Արաբիան: Այս երկրները, ինչպես նաև այլ պետություններ, ինչպիսինն է Սինգապուրը, շարունակում են անտեսել մարդու իրավունքների միջազգային իրավունքը՝ մահապատիժ կիրառելով թմրամիջոցների հետ կապված գործերում կամ նույնիսկ այն դեպքերում, երբ քաղաքացիներն իրենց կարծիքն են արտահայտում սոցիալական ցանցերում կամ փողոցներում: Պետք է հրաժարվել այս

անմարդկային պատժի կիրառումից: Մենք նաև ցավով ենք նշում, որ 2022 և 2023 թվականների ընթացքում մահապատիժները շարունակվել են կիրառվել ԱՄՆ-ում:

Մենք կոչ ենք անում բոլոր այն պետություններին, որտեղ դեռ պահպանվում է մահապատիժը, խթանել բաց և ժողովրդավարական քննարկումները մահապատժի վերացման հարցի վերաբերյալ: Հաշվի առնելով դա՝ պետությունները պետք է բարելավեն մահապատժի ընթացակարգի, քաղաքականության և պրակտիկայի վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության թափանցիկությունը և հասանելիությունը: Մահապատժի վերականգնման մասին պատմույթների պարբերական վերադարձը պետք է խթանի քաղաքացիական հասարակության հետ ավելի մեծ ներգրավվածության և երիտասարդների շրջանում դրա վերացման ուղերձի քարոզչությունը: Բոլոր աբոլիցիոնիստ երկրների կառավարությունները պետք է հստակ ուղերձ հղեն այն մասին, որ մահապատիժը չի վերադառնա իրենց ներքին պատժիչ համակարգ:

ԵՄ-ն և Եվրոպայի խորհուրդը կշարունակեն համառորեն քարոզել մահապատժի, այդ թվում՝ սրբապղծության, հավատուրացության կամ փոխադարձ համաձայնությամբ համասեռականության համար պատժի դեմ:

Քաղաքացիական հասարակությունը շարունակում է մնալ մահապատժի դեմ համաշխարհային պայքարի առաջնագծում: ԵՄ-ն և Եվրոպայի խորհուրդը կշարունակեն ամրապնդել համագործակցությունը՝ հասնելու այս նպատակին և՛ օրենսդրական, և՛ գործնական դաշտում: Այս նշանակալից օրը մենք ողջունում ենք բոլոր այն իրավաբաններին, իրավապաշտպաններին, ակադեմիկոսներին, քաղաքական գործիչներին և անհատներին, ովքեր շարունակում են անխոնջ աշխատել հանուն մարդու արժանապատվության, մարդու իրավունքների, ինչպես նաև մահապատժին մեկընդմիշտ վերջ դնելու ուղղությամբ: